ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Դ. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԽՍՀՄ-ում դեռևս մինչև պատերազմը սննդարդյունաբերության և լայն սպառման ապրանքների շատ տեսակների արտադրությունը զգալի չափով կրճատվեց։ Դա սոցիալիստական տնտեսության առանձնահատկության, նրա տարբեր ճյուղերի անհավասարաչափ զարգացման հետևանքն էր։ Սննդամթերքի և լայն սպառման առարկաների արտադրության կրճատումը նյութական ահռելի միջոցները ռազմական արդյունաբերության մեջ ներդնելու և տնտեսությունը վարչաբյուրոկրատական մեթոդներով ղեկավարելու արդյունք էր։

Սննդարդյունաբերության հումքային բազան՝ գյուղատնտեսությունը, ծայրահեղ քայքայված վիճակում էր։ Համատարած կոլեկտիվացումը հանգեցրեց գյուղացիության ունեզրկմանը, ոչնչացրեց գյուղատնտեսության արտադրողական ուժերը[1]։ Բռնություններն ու գյուղից գյուղացիների զանգվածային փախուստը քայքայեցին աշխատանքային ներուժը։ Պետությունը հարկադրորեն յուրացնում էր ոչ միայն կոլտնտեսությունների արտադրած բնամթերքը, այլև կոլտնտեսականների օժանդակ տնտեսությունների արդյունքը[2]։ Կտրուկ վատացավ բնակչության սպառման կառուցվածքը։ 1939 թ. համեմատությամբ 1940 թ. ապրանքաշրջանառության ծավալը կրճատվեց 7 %-ով, արդյունաբերական ապրանքներինը՝ 11 %-ով[3]։

Հայտնի է, որ ԽՍՀՄ-ի կառավարությունը վերահաս պատերազմի սպառնալիքի պայմաններում նախապես չէր մշակել տնտեսությունը ռազմական ռելսերի վրա փոխադրելու միասնական ծրագիր։ Այն փաստորեն մշակվեց պատերազմի ընթացքում՝ հաջորդաբար մի քանի պլանների միջոցով։ Վերջիններիս թվում առանձնանում է 1941 թ. օգոստոսի 16-ին հաստատված «Պովոլժիեի, Ուրալի, Արևմտյան Սիբիրի, Ղազախստանի և Միջին Ասիայի, ինչպես նաև Կրասնոյարսկի և Կոմի ԻԽՍՀ-ի 1941 թ. չորրորդ եռամսյակի 1942 թ. ռազմատնտեսական պլանը»։ Այս պլանով նշված շրջանները դառնում էին ԽՍՀՄ-ի ռազմական արդյունաբերության կարևորագույն բազաները։ Նրանցում նաև նախատեսվում էին սննդամթերքի պետական ռեզերվների աճ և երկրի արևմտյան շրջաններից դրանց տեղափոխումը հիշյալ շրջանները։

Պատերազմի ժամանակ, բանակի թվաքանակի մեծանալուն զուգընթաց, կրճատվեցին սննդամթերքի շուկայական ֆոնդերը, այլ կերպ ասած՝ մանրածախ առևտրի և հասարակական սննդի ֆոնդերը։

Քաղաքային բնակչությանը սննդամթերքով ապահովելու գործում կարևոր միջոցառում էր նորմավորված մատակարարումը։ Ընդլայնված առևտրից նորմավորված բաշխման անցումը նշանակում էր սննդամթերքի և առաջին անհրաժեշտության ապրանքների սղության պայմաններում երաշխավորված մատակարարում ու բնակչության կենսագործունեության ապահովում։

Պարենային և ոչ պարենային մի շարք ապրանքների նորմավորումը հարկադրական քայլ էր։ Այն սահմանափակում էր վաճառվող ապրանքների ծավալը և տեսականին։ Ապրանքները մատչելի էին միայն քարտեր ունեցողներին։ Նույնատեսակ ապրանքներն ունեին տարբեր գներ։ Նորմավորումը ազ-

---

1 Б. П. Орлов. Истоки перестройки, ЭКО, М., 1985. № 5. с. 9.

2 *Նույն տեղում։*

3 *Նույն տեղում, էջ 11—12։*

դում էր դրամի շրջանառության վրա, գցում էր սպասարկման կուլտուրան, ապրանքի որակը, սահմանափակում առևտուրը, նպաստում սպեկուլյացիային և այլն։

Այսպիսով, պարենային և ոչ պարենային մի շարք ապրանքների բաշխումը սկսեց իրականացվել քարտային համակարգով։ Առաջինը դրան անցան Մոսկվան և Լենինգրադը 1941 թ. հուլիսի 17-ին և 18-ին։ Վերջիններիս փորձը դրականորեն ազդեց երկրի մյուս շրջանների վրա։

Նորմավորված սննդամթերքներն էին՝ հացը, ալյուրը, շաքարը, հրուշակեղենը, միսը, մսամթերքը, ձկնեղենը, յուղը, ձավարեղենը։ 1942 թ. ապրիլի 8-ի ԽՍՀՄ Ժողկոմխորհի որոշման համաձայն ՀԿ (բ)Կ ԿԿ բյուրոն ապրիլի 21-ին ընդունեց «ՀԽՍՀ-ի քաղաքներում և բանվորական ավաններում արդյունաբերական ապրանքների վաճառքի համար քարտային համակարգ մտցնելու մասին» որոշումը[4]։ Նրա համաձայն վերոհիշյալ ապրանքների բաշխումը կատարվում էր տարբերակված։ Այս հանգամանքը հիմնավորվում էր կատարվող աշխատանքի բնույթով, բանվորների տարիքով, ժողովրդական տնտեսության և երկրի պաշտպանության համար դրանց ունեցած նշանակությամբ։ Բաշխման այս եղանակը բխում էր ստալինյան այն դոգմայից, ըստ որի միևնույն բարդության աշխատանքը տնտեսության տարբեր ճյուղերում վարձատրվում էր տարբեր չափերով։ Այս սկզբունքը գործում էր դեռևս նախապատերազմյան ժամանակներում։ Մեկ ուրիշ դոգմայի համաձայն տնտեսության ճյուղերը բաժանվում էին արտադրականի և ոչ արտադրականի։ Առաջինում աշխատողները շատ ավելի բարձր էին վարձատրվում։

Այսպիսով, բնակչությունը բաժանվեց 4 խմբի՝ ա) բանվորներ և նրանց հավասարներ, բ) ծառայողներ և նրանց հավասարներ, գ) խնամարկյալներ և նրանց հավասարներ, դ) երեխաներ (մինչև 12 տարեկան)[5]։

Առաջին խմբի մեջ էին մտնում բանվորները, նրանց աշակերտները, ձեռնարկությունների տնօրենները, ինժեներները, տեխնիկները, արտադրամասերի և շինարարական տեղամասերի պետերը, կոնստրուկտորները, արտադրության վարպետներն ու հրահանգիչները, արդյունաբերական ձեռնարկությունների, շինարարության, կապի, տրանսպորտի, առևտրի աշխատողները, մանկավարժները, բժիշկները, ուսանողները և այլն։

	Հաց (օրական) գրամներով		Շաքար և հրուշակեղեն (ամսական) գրամներով	
	1-ին կարգ	2-րդ կարգ	1-ին կարգ	2-րդ կարգ
Բանվորներ	800	600	800	600
Ծառայողներ	500	400	600	600
Խնամարկյալներ	400	400	400	400
մինչև 12 տարեկան երեխաներ	400	400	600	400[6]

Հիշյալ աշխատողներն ըստ իրենց մատակարարումների տարբերակվեցին երկու՝ 1-ին և 2-րդ կարգի։ Առաջին կարգի մեջ մտան պաշտպանության, ածխի, նավթի, քիմիական, ռետինի և ցեմենտի արդյունաբերության սև և

4 Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի պետական կենտրոնական արխիվ (այսուհետ՝ ՀՀ ՀՔԿՓՊԿԱ), ֆ. 1, ց. 31, գ. 13, թ. 51։

5 У. Г. Чернявский, Война и продовольствие, М., 1964, с. 73, А. В. Любимов, Торговля и снабжение в годы Великой Отечественной войны, М., 1968, с. 27.

6 А. В. Любимов, նշվ. աշխ., էջ 28։

գունավոր մետալուրգիայի, էլեկտրաէներգիայի, ծանր, միջին և ընդհանուր մեքենաշինության և այլ աշխատողները։ Ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի բանվորներն ու ծառայողները, քաղաքային մնացած բնակչությունը հաց ստանում էին ըստ 2-րդ կարգի նորմայի։

Սկզբում սահմանվեցին հացի և շաքարի մատակարարման հետևյալ չափերը.

Սակայն բնակչությանն այս քանակությամբ հնարավոր չեղավ ապահովել պարենամթերքով, ահա թե ինչու հարկ եղավ 1942 թ. զգալիորեն պակասեցնել շաքարի, իսկ 1943 թ. նաև՝ հացի նորմաները։ Բանվորները ստանում էին 500—700 գր. հաց, ծառայողները՝ 400—500 գր., խնամարկյալները և երեխաները՝ 300 գր.։ Փաստորեն բաշխման այս չափը կազմում էր նախապես սահմանվածի գրեթե կեսը։

Տարբերակվեցին նաև մսի, ձկան, յուղի, ձավարեղենի նորմաները։

Ծանր արդյունաբերության և պաշտպանական արդյունաբերության աշխատողները հատուկ ցուցակներով ստանում էին ամսական 2200 գր. ձուկ և միս, 600 գր. ճարպ և 1500 գր. ձավարեղեն, իսկ մյուսները ստանում էին հետևյալ չափերով՝

Արդյունաբերության մյուս ճյուղերի բանվորները, ինժեներատեխնիկական աշխատողները, տրանսպորտի և կապի աշխատողները	1800 գր. ձուկ և միս	400 գր. ճարպ	1200 գր. ձավար և մակարոնեղեն
Ծառայողները	1200	300	800
Խնամարկյալները	500	200	600
մինչև 12 տարեկան երեխաները	400	300	800[7]

1942 թ. հունվարի 31-ի ՀԽՍՀ առևտրի ժողկոմի հրամանի համաձայն հիշյալ նորմավորումը տարածվում էր Ալավերդու պղնձաձուլական գործարանի, Ալավերդու, Ախթալայի և Շամլուղի հանքավարչությունների, Զանգեզուրի պղնձի հանքերի, Ղափանի ֆաբրիկայի, Քանաքեռի ՀԷԿի, Հայէներգոյի Երևանի, Լենինականի և Քոլագերանի ՀԷԿերի, Երևանի կարբիդի և Կիրովականի քիմկոմբինատի հատուկ արտադրամասերի բանվոր-ծառայողների և ինժեներատեխնիկական աշխատողների վրա։ Այս նորմաները տարածվեցին նաև մյուս աշխատողների վրա[8]։

Պատերազմի տարիներին կրճատվեց հանրապետության սննդարդյունաբերության և լայն սպառման ապրանքների արտադրությունը։ Սննդարդյունաբերության արտադրանքը կրճատվեց 30 %-ով, իսկ թեթև արդյունաբերության արտադրանքը՝ 1,7 անգամ։ Կրճատվեց նաև տեղական արդյունաբերության արտադրանքի այդ տեսակների արտադրությունը։

Հանրապետությունում արտադրվող սննդի արդյունաբերության արտադրանքի զգալի մասը հատկացվում էր Անդրկովկասյան ռազմաճակատին, սակայն վերջինիս պահանջներն օրեցօր մեծանում էին։

Ի պատասխան 1943 թ. ռազմաճակատի հրամանատարության՝ պարենամթերքի մատակարարումը ավելացնելու նորանոր պահանջների, հանրապետության ժողկոմխորհի նախագահը առանց քողարկելու հայտնում էր, որ այլևս ոչ մի հնար չկա պակասեցնել բնակչությանը բաշխվող պարենամթերքի չափը, որը հասցվել էր նվազագույնի։ Այդուհանդերձ նա խոստանում էր ռազմաճակատին լրացուցիչ տրամադրել 10 տ. յուղ և 95 տ. շաքար։ 1942 թ.

---

7 Նույն տեղում, էջ 30։

8 Հայաստանի Հանրապետության նոր պատմության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՆՊՊԿԱ), ֆ. 193, ց. 4, գ. 34, թ. 1—2։

չորրորդ եռամսյակում պլանով նախատեսվել էր բանակին հատկացնել 150 տ. օճառ, 35 տ. ձավարեղեն, 200 տ. վայրի պտուղների չիր, 2 միլիոն տուփ մսաճարպի պահածո և այլն[9]։

Այս նույն ժամանակ առանձնապես սրվեց բնակչությանը հացով բավարարելու հարցը։ Հոկտեմբերին հանրապետության ղեկավար մարմինների որոշումով 1942 թ. բերքից լրացուցիչ 9150 փութ հաց հատկացվեց պետությանը։ Պետությունը հացի փոխարեն կարտոֆիլ վաճառեց բնակչությանը՝ 100 գր. հացի դիմաց 400 գր. կարտոֆիլ հարաբերակցությամբ, Հայկոոպին թույլատրվեց թխվող հացին ավելացնել 5—10 % կարտոֆիլ[10]։

Քարտեր մտցնելուց հետո կրճատվեց հացի սպառումը։ 1942 թ. հունվարին Երևանում օրական 170 տ. հացի փոխարեն սկսեց վաճառվել 125 տ., որից 100 տ. քարտերով, 25 տ. աղատ վաճառք[11]։ Որոշ խանութների, սրճարանների և ռեստորանների թույլատրվեց առևտուր կատարել առանց քարտերի, սակայն ապրանքների անհամեմատ բարձր դներով։

Պարենամթերքի տարբերակված բաշխումը ներառում էր նաև քարտային համակարգից դուրս գոյություն ունեցող մատակարարման այլ ձևեր։ Պաշտպանական նշանակության արդյունաբերական և տրանսպորտային ձեռնարկությունների բանվորներն ու ինժեներատեխնիկական աշխատողները արտադրական պլանները կատարելիս և գերակատարելիս ստանում էին լրացուցիչ սնունդ։ Լրացուցիչ սննդից օգտվում էին նաև արտադրությունում աշխատող ֆաբրիկագործարանային ուսուցման և արհեստագործական ուսումնարանների սաները, հիվանդները, հղի կանայք և ծննդկանները։

Սննդամթերքի հատուկ օրաբաժնով ապահովվում էին նաև մանկամսուրները, մանկապարտեզները և դպրոցները։ Պատերազմի տարիներին առևտրի և մատակարարման հատուկ համակարգ դարձավ փակ բաշխումը։ Այն հենվում էր բանվորական մատակարարման բաժինների վրա։ 1942 թ. սկզբներից ծանր արդյունաբերության, հետագայում նաև այլ ճյուղերի ձեռնարկություններում ու հաստատություններում ստեղծվեցին այդպիսի բաժիններ։ Բանվորական մատակարարման բաժինները իրենց ձեռնարկության կամ հաստատության աշխատողներին ու նրանց ընտանիքի անդամներին ապահովում էին մթերքով, լայն սպառման ապրանքներով ու կենցաղային սպասարկումով։ Ինչպես նշվեց, բանվորական մատակարարման բաժինները փակ էին, դրանք սպասարկում էին միայն սեփական ձեռնարկության կամ հաստատության աշխատողներին։

Պետք է նշել, որ հիշյալ օղակները դատարկ տեղում չէին ստեղծվում։ Դրանք հենվում էին «անցյալի հարուստ փորձի վրա»։ Այսպես՝ դեռևս 1930-ական թվականների սկզբներին ԽՍՀՄ-ում ստեղծվել էին տարբեր տեսակի կազմակերպությունների փակ բաշխիչներ, բանվորական փակ կոոպերատիվներ, բանվորական մատակարարման բաժիններ, ինչպես նաև գերատեսչական սպասարկման կազմակերպումներ։

Բանվորական մատակարարման բաժիններին բացի պետության կողմից հատկացված ֆոնդերից հնարավորություն էր ընձեռվում զարգացնելու սեփական հումքային բազան՝ ի հաշիվ օժանդակ տնտեսությունների։ Այս քայլը նպատակ ուներ հնարավորին չափ թեթևացնել պարենային դժվարությունները։ Երևանի քաղխորհրդի որոշմամբ 1942 թ. քաղաքի շրջակայքից 120 հա տարածություն հատկացվեց սննդառին, 73 հա՝ ճաշարանների տրեստին, 35 հա՝ զինառին[12]։

Հայրենական մեծ պատերազմի տարիներին տնտեսական մեծ նշանակություն ունեցավ անհատական և կոլեկտիվ եղանակով բանջարաբուծության և

---

9 Նույն տեղում, ֆ. 113, ց. 32, գ. 69, թ. 116—117։

10 ՀՀ ՀՔԿՓՊԿԱ, ֆ. 1, ց. 31, գ. 23, թ. 45։

11 ՀՀ ՆՊՊԿԱ, ֆ. 193, ց. 4, գ. 38, թ. 1։

12 Նույն տեղում, գ. 37, թ. 5։

այգեգործության զարգացումը։ Այն կայուն և հուսալի աղբյուր էր բանվորներին և ծառայողներին լրացուցիչ սննդամթերքով ապահովելու գործում։ Կոլեկտիվ ե անհատական բանջարաբուծությամբ զբաղվողներն ազատվում էին գյուղատնտեսական հարկից։ Հողագործության հիշյալ ձևը Հայաստանում լայն տարածում ստացավ։ 1943 թ. հանրապետության քաղաքային բնակչության 25 %-ը ընդգրկված էր կոլեկտիվ և անհատական բանջարաբուծության և այգեգործության մեջ։ Նրանցից յուրաքանչյուրին միջին հաշվով բաժին է ընկել 8 կգ կարտոֆիլ։ Հիշյալ թվերը Վրաստանում և Ադրբեջանում համապատասխանաբար կազմել են 17 %, 6 %, 0,3 և 0,4 կգ[13]։

Նորմավորված մատակարարումը ղեկավարվում էր լրիվ կենտրոնացման սկզբունքով։ Միայն միութենական կառավարությունն էր իրավասու՝ որոշելու երկրի այս կամ այն շրջանում մատակարարում մտցնելու հարցը, սահմանելու նրա չափերը և այլն։ Ընդսմին, բնակչության մատակարարման հիշյալ համակարգը ղեկավարվում էր բավականին ուռճացած բյուրոկրատական ապարատի միջոցով։ Այդ ապարատի բարձրագույն օղակը ԽՍՀՄ-ի առևտրի ժողկոմատում ստեղծված նորմայավորված մատակարարման վարչությունն էր։ Հաջորդը հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդներին և գործադիր կոմիտեներին կից մթերային և արդյունաբերական քարտերի բյուրոներն էին, որոնք 1943 թ. հանձնվեցին հանրապետությունների առևտրի ժողկոմատների ենթակայությանը։

Բնակչությունը քարտերը ստանում էր ձեռնարկություններում, հիմնարկներում, հաստատություններում և տնային կառավարչություններում։ Վերջիններս իրենց հերթին դրանք ստանում էին քաղաքային և շրջանային քարտային բյուրոներից։ Հիշյալ օղակներից բացի ստեղծվեցին վերստուգիչ-հաշվառիչ բյուրոներ, որոնց խնդիրը մատակարարվողների թվի, քարտերի և դրանց դիմաց տրվող ապրանքների բաշխման վերահսկումն էր։ Վերստուգիչ-հաշվառիչ բյուրոներից բացի կային նաև այլ մարմիններ, որոնք ևս վերահսկողության իրավունքներ ունեին։ Դրանցից էին տեղական խորհուրդների առևտրական հանձնաժողովները, ձեռնարկությունների ու հաստատությունների արհմիութենական ակտիվը և այլն։ Առանց վարանման կարելի է ասել, որ որքան ավելանում էր հսկիչների ու վերահսկիչների թիվը, այնքան շատանում էին չարաշահումներն ու խախտումները։ Օրինակ, առևտրի ժողկոմատի հաշվառման բյուրոյի 93 աշխատողներից 69-ը հեռացվել էին աշխատանքից՝ չարաշահումների համար[14]։

Չնայած քարտային համակարգին անցնելուն, ապրանքների կոլտնտեսային և կոմերցիոն գների միջև եղած մեծ տարբերություններին, երկրում տարածվում էր սպեկուլյացիան։ Սննդամթերքի պակասը սպառողներին հնարավորություն չէր տալիս քարտերով ստացվելիք ապրանքների մեջ ընտրություն կատարել։ Ավելին՝ հաճախ նշված ապրանքների փոխարեն տրվում էին նրանց փոխարինողները՝ մսի փոխարեն ձուկ, վերջինիս փոխարեն պահածո, շաքարի փոխարեն՝ հրուշակեղեն կամ էլ պարզապես տրվում էին անորակ ապրանքներ։

Աճել էին մթերքների և արդյունաբերական ապրանքների վատնումները, հափշտակումները, չարաշահումները և այլն։ Ամենից շատ չարաշահումներ էին կատարվում հացի արտադրության և առևտրի բնագավառում։ 1942 թ. հացի վաճառքի 507 կետերում կատարված ստուգումները բացահայտել էին թերակշռման և հաշվարկախաբության 313 դեպք։ Այդ ժամանակաշրջանում քրեական պատասխանատվության են ենթարկվել 1671 մարդ՝ արդյունաբերական և մթերային ապրանքների վատնումների և հափշտակումների, հիմնականում հացի համար[15]։ Պետության կողմից հատկացված սուղ միջոցները

13 У. Г. Чернявский, նշվ. աշխ., էջ 149։
14 ՀՀ ՀՔԿՓՊԿԱ, ֆ. 1, ց. 23, գ. 27, թ. 111—112։
15 Նույն տեղում, գ. 36, թ. 46։

երբեմն կամ չէին յուրացվում, կամ էլ մեծ ուշացումներով էին հասնում սպառողին։ Լենինականում մսի ու ձկան առաջին կիսամյակի ֆոնդերը իրացվել էին 93,8, շաքար-հրուշակեղենի արտադրանքինը՝ 81,7, աղինը՝ 92, նավթինը և լուցկունը 90 %-ով, իսկ երրորդ եռամսյակի երկու ամսվա մսի և ձկան ֆոնդերինը՝ 44, ճարպինը՝ 66,5, շաքար-հրուշակեղենինը՝ 71, օճառինը՝ 43, կերոսինինը՝ 40 և լուցկունը՝ 52 %-ով[16]։ Հատկապես վատ էին իրացվել գործվածքի, գուլպայի և կարի արտադրանքների ֆոնդերը։ Քաղաքի բնակչությունը շաքարի կտրոններով ապահովվել էր մայիսին՝ 90 %-ով, իսկ հուլիս-օգոստոսին շաքարը բաց էր թողնվել մասնակիորեն։ Նույնպիսին էր նաև օճառի և կերոսինի մատակարարման դրությունը[17]։ Բնակչության մատակարարումը բարձիթողի վիճակում էր նաև Կիրովականում, ուր ֆոնդերը չէին իրացվել, կամ իրացվել էին չնչին տոկոսով։ Պատկերը նույնն էր հասարակական և բանվորական ճաշարաններում։ Դրանց թիվը կրճատվել էր սննդամթերքի պակասի, վատ սպասարկման և այլ բաղում պատճառների հետևանքով։ Կիրովականի չորս ճաշարաններից 1943 թ. հոկտեմբերի տվյալներով գործել էին միայն երկուսը, իսկ 5 բուֆետներից՝ ոչ մեկը[18]։

Այսպիսով Հայրենական մեծ պատերազմի տարիներին պետության ձեռքում ապրանքային արտադրության հիմնական միջոցների կենտրոնացումը հնարավորություն տվեց ապահովելու սպառման կարևորագույն ապրանքների բաշխման կայուն համակարգ։ Հայաստանի քաղաքային բնակչության պահանջմունքները, թեկուզև սահմանափակ քանակությամբ, բավարարելու համար իրականացվեց ապրանքների նորմավորումը։ Այն հնարավորություն տվեց առավել արդյունավետ կերպով օգտագործել պարենամթերքի և առաջին անհրաժեշտության ապրանքների սահմանափակ ռեսուրսները։ Թեպետև բնակչության մատակարարման գործում լուրջ թերություններ ու բացթողումներ կային, այնուամենայնիվ, պետական մատակարարման համակարգը մեծ նշանակություն ունեցավ։

СНАБЖЕНИЕ ГОРОДСКОГО НАСЕЛЕНИЯ АРМЕНИИ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ

Г. А. ХАЧАТРЯН

Резюме

В годы Великой Отечественной войны концентрация основной массы товарных ресурсов в руках государства позволила обеспечить устойчивую систему распределения важнейших предметов потребления. Необходимость удовлетворять нужды городского населения Армении, хотя и в ограниченных размерах, потребовала введения нормированного снабжения. Несмотря на то, что в годы войны в деле снабжения имелись серьезные недостатки и упущения, все же роль системы государственного снабжения была огромна.

16 Նույն տեղում։

17 Նույն տեղում, ց. 23, գ. 36, թ. 75։

18 Նույն տեղում, ց. 25, գ. 31, թ. 43։